ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/99

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.06.2018թ. թիվ 03/26-3/11891-18 գրությամբ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության 26.06.2018թ. թիվ 07/18.3/4725-18 գրության հիման վրա, 29.06.2018թ. թիվ 03/26-3/11891-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել են, որ «ՀՀ ՏԶՆՆ-ԲՄԾԶԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը 25.06.2018թ. թիվ 5 արձանագրության 2-րդ կետով ընդունել է որոշում Ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժելու վերաբերյալ, որը չունի հիմնավորում հետևյալ պատճառներով.

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կոնսորցիումի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու մասին որոշում պետք է կայացներ հանձնաժողովի՝ 23.05.2018թ. թիվ 3 արձանագրությամբ, որի համաձայն հանձնաժողովն արդեն իսկ գնահատել էր կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրել էր, որի դրանք թերի են:
- 25.06.2018թ. թիվ 5 արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշման համար հիմք են հանդիսացել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) աշխատակազմի ղեկավարի 25.05.2018թ. թիվ 07/18.3/3833-18 գրությունը, որով վերջինս դիմել էր ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ Կարեն Ասոյանին՝ խնդրելով ճշտել կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի իսկությունը և ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ Կարեն Ասոյանը 20.06.2018թ. թիվ Т-01/0620-03 գրությունը, որով նա պատասխանել է Պատվիրատուին և հայտնել, որ ըստ «МИЭТ» Ազգային գիտահետազոտական համալսարանից ստացված տեղեկատվության կոնսորցիումի կողմից որպես որակավորումը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված պայմանագրի տեխնիկական բնութագիրը վերցված է համացանցի բաց աղբյուրներում տեղադրված նյութից և գրությանը կցել է «МИЭТ» Ազգային գիտահետազոտական համալսարանի գրությունը, որում ասվում է, որ կոնսորցիումի կողմից ներկայացված պայմանագրում նկարագրված աշխատանքները տվյալ համալսարանում չեն իրականացվել և նման համակարգ համալսարանում

ներդրված չէ: Տվյալ գրությունները չէին կարող հիմք հանդիսանալ հանձնաժողովի կողմից կոնսորցիումի հայտը մերժելու համար, հետևյալ պատճառաբանությամբ.

- ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը, մինչդեռ նմանատիպ գրություն ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ Կարեն Ասոյանին ուղղել է ոչ թե հանձնաժողովը, այլ Պատվիրատուի աշխատակազմի ղեկավարը, ով չի հանդիսանում հանձնաժողովի անդամ և իրավասու չէ հանդես գալ հանձնաժողովի անունից.
- Կոնսորցիումի կողմից որպես որակավորումը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված պայմանագիրը կնքված է «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների միջև, համաձայն որի պատվիրատու է հանդիսացել «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ընկերությունը, ուստի, ծառայությունները մատուցված լինելու փաստը ստուգելու համար ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ Կարեն Ասոյանը պետք է դիմել «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ընկերությանն, այլ ոչ թե վերը նշված պայմանագրի կողմ չհանդիսացող և այդ պայմանագրի հետ որևէ առընչություն չունեցող «МИЭТ» Ազգային գիտահետազոտական համալսարանին: Հասկանալի է, որ «МИЭТ» Ազգային գիտահետազոտական համալսարանի նման ծառայություն չի ստացել և չէր կարող ստանալ, քանի որ չի հանդիսացել վերը նշված պայմանագրի կողմ: Իսկ «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների միջև կնքված պայմանագրում առկա «МИЭТ» արտահայտությունն ընդամենը տեխնիկական վրիպակ է, ինչը հավաստվում է «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ընկերության կողմից տրված գրությամբ (կցվել է):

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ Կարեն Ասոյանի և «МИЭТ» Ազգային գիտահետազոտական համալսարանի գրությունները չեն կարող դիտարկվել որպես պաշտոնական աղբյուներից ստացված տվյալներ կամ իրավասու մարմինների գրավոր եզրակացություններ և վերաբերելի չեն Ընթացակարգին:

Ընկերությունը գտնում է նաև, որ Պատվիրատուի գործողություններում առկա են կանխակալ մոտեցման տարրեր, մասնավորապես.

- Armeps համակարգում ի տարբերություն Ընթացակարգի մնացած մասնակիցների հայտերի՝ թերի են «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաթեթը, հարց է առաջանում, թե ինչպես Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կարողացել բավարար գնահատել մասնակցի փաստաթղթերը, այն պարագայում, որ դրանք բեռնված չեն համակարգում.

- Ընթացակարգի հանձնաժողովն իր 23.05.2018թ. թիվ 3 արձանագրությամբ մատնանշում է, որ կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում է հաշիվ-ապրանքագրի պատճենը և ոչինչ չի նշվում հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ, մինչդեռ կոնսորցիումի կողմից թերությունը շտկվելուց հետո նույն հանձնաժողովն իր 24.05.2018թ. թիվ 4 արձանագրությամբ մատնանշել է, որ թերություն կա նաև հանձնման-ընդունման արձանագրության մեջ, իսկ հաշիվ-ապրանքագիրը հաստատված է միակողմանի: Հարց է ծագում, եթե հանձնման-ընդունման արձանագրությունը թերի էր, ապա ինչու հանձնաժողովն այդ մասին չէր հայտնել կոնսորցիումին և առաջարկել շտկել այն դեռևս թիվ 3 արձանագրությամբ, չէ որ մասնակիցը կարող էր համապատասխան գրություն վերցնել ներկայացված պայմանագրի պատվիրատուից, կամ եթե հանձնաժողովը գտնում է, որ կոնսորցիումի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագիրը թերի է, ինչու այդ հիմնավորմամբ չի մերժում կոնսորցիումի հայտը, այլ որոշում է կայացնում այլ աղբյուրների միջոցով ստուգել կոնսորցիումի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ անհարկի երկարաձգելով հայտերի գնահատման գործընթացը: Չէ որ ըստ Ընթացակարգի հրավերի ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանված 15.12.2018թ. և գնման պայմանագիրն ուշ կնքվելու պարագայում հաղթող մասնակիցը ժամանակային խնդրի առաջ է կանգնելու:

- Պատվիրատուի աշխատակազմի ղեկավարի կողմից ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ պարոն Կ. Թամազյանին ուղղված գրությամբ նա հայտնել է, որ ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցչի 20.06.2016թ. թիվ Т-01/0620-03 գրության մեջ նշված է, որ «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների միջև կնքված պայմանագիրը

գոյություն չունի, ինչն իրականությանը չի համապատասխանում, քանի որ նյութերում առկա է ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցչի 20.06.2016թ. թիվ Т-01/0620-03 գրությունը, որում նման եզրույթ չկա և չէր կարող լինել, քանի որ նա իրավասու չէ նման եզրակացություններ տալ.

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը հաստատակամ փորձում է մերժել մի մասնակցի, որի կողմից ներկայացված գնային առաջարկը գրեթե 12 000 000 ՀՀ դրամով ավելի պակաս է 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկից և կասկածամտորեն է վերաբերում մի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին, որը հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ դրամի ձևով:

Ընկերությունները ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են մերժել վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

Ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/99 ընթացակարգի շրջանակներում 04.07.2018թ. ժամը 10:15-ին և 06.07.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 06.07.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստին ապահովել են իրենց ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.06.2018թ. թիվ 07/18.3/4725-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարվել է «ՀՀ ՏԶՆՆ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ծրագրերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման մրցույթի հրավեր:

Ըստ ներկայացված գնային առաջարկների՝ նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ի կոնսորցիումը: «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, իսկ «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն ՌԴ ռեզիդենտ և կոնսորցիումի պայմանագրով մասնագիտական փորձառության մասը պետք է ապահովի «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ կոնսորցիումի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ և պահանջել է ներկայացնել որակավորման փաստաթղթեր: Վերջինս սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման փաստաթղթերը, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից կասկած է առաջացել ներկայացված պայմանագրի իսկության վերաբերյալ և գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետը, նիստը կասեցրել է և որոշել է ստուգել ներկայացված փաստաթղթերի իսկությունը՝ 25.05.2018թ. թիվ 04/183/3833-18 գրությամբ դիմելով Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ առևտրային ներկայացուցչին:

Ի պատասխան ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ղեկավարի 25.05.2018թ. թիվ 04/183/3833-18 գրության՝ ստացվել է Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ առևտրային ներկայացուցչի 20.06.2018թ. թիվ Т-01/0620-03 գրությունը, որում նշվում է, որ մասնակցի կողմից որակավորման փուլում ներկայացված «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊԸ-ների միջև կնքված պայամանագիրը որպես այդպիսին գոյություն չունի և պայմանագրի տեխնիկական բնութագիրը տառացի վերցված է համացանցի բաց աղբյուրներում տեղադրված ուսումնական նյութից: Ինչպես նաև 04.04.2017թ. թիվ ТР-02050/17 պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պայմանագրի առարկա հանդիսացող

համակարգը մինչ օրս ներդրված չէ «МИЭТ» Ազգային գիտահետազոտական համալսարանի մասնաշենքերում: Կից ներկայացվում են համապատասխան գրությունները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/99 ընթացակարգի շրջանակներում 04.07.2018թ. ժամը 10:15-ին և 06.07.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/99 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/99 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար ծրագրերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՏԶՆՆ-ԲՄԾԶԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես Ընկերության կողմից չի ներկայացվել նախկինում կատարված «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև կնքված պայմանագրի անբաժանելի մաս

կազմող հաշիվ-ապրանքագրերի պատճենները, փոխարենը ներկայացվել է մատուցված ծառայության դիմաց վճարման պահանջ:

«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ծանուցվել է վերոհիշյալ անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, 25.06.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.06.2018թ. թիվ 03/26-3/11891-18 գրությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության 26.06.2018թ. թիվ 07/18.3/4725-18 գրությունը, «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի

«զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար ծրագրերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՏԶՆՆ-ԲՄԾԶԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Կոնսորցիումը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՏԶՆՆ ԲՄԾԶԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին

տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների միջև 14.05.2018թ. կնքված N ԱԹ-140518 համատեղ գործունեության պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետի համաձայն՝ «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներդնել մասնագիտական փորձառություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Կոնսորցիումի կողմից որպես նմանատիպ պայմանագիր ներկայացվել է «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև 04.04.2017թ. կնքված ծրագրային ապահովման ծառայությունների մատուցման TP-02050/17 պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես Ընկերության կողմից չի ներկայացվել նախկինում կատարված «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող հաշիվ-ապրանքագրերի պատճենները, փոխարենը ներկայացվել է մատուցված ծառայության դիմաց վճարման պահանջ:

«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ծանուցվել է վերոհիշյալ անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Կոնսորցիումի կողմից որակավորման փուլում ներկայացվել է «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև կնքված

պայմանագիր, հանձնման-ընդունման արձանագրություն, որում նշված չէ մատուցված ծառայության անվանումը և միակողմանի կազմված և հաստատված հաշիվ:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը, ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունն՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

Այսպես՝ «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև 04.04.2017թ. կնքված ТР-02050/17 պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրի մեջ աշխատանքների կատարման ժամանակացույցով որպես Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման փուլեր նախատեսվել է համապատասխան աշխատանքների իրականացումը (ծրագրի ներդրում) ՌԴ-ում գործող «МИЭТ» ազգային գիտահետազոտական համալսարանում:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը 25.05.2018թ. թիվ 04/183/3833-18 գրությամբ դիմել է ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցչին Կոնսորցիումի ներկայացրած պայմանագրի իսկությունը ստուգելու նպատակով:

Ի պատասխան Պատվիրատուի վերոհիշյալ գրության՝ ՌԴ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչը 20.06.2018թ. թիվ Т-01/0620-03 գրությամբ ներկայացրել է «МИЭТ» ազգային գիտահետազոտական համալսարանի պատասխանը, համաձայն որի «МИЭТ» ազգային գիտահետազոտական համալսարանում չի իրականացվել, չի մշակվել և չի ներդվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը, 25.06.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժել է:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված պայմանագիրը կնքվել է «ՏՐԱՆԶԻՏ» (կատարող) և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» (պատվիրատու) ՍՊ ընկերությունների միջև:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն որպես կատարող պարտավորվել է պատվիրատու «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին մատուցել ծրագրային ապահովման համալիր ծառայություններ՝ Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրին համապատասխան, իսկ «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն պարտավորվել է ընդունել ծառայությունները և վճարել դրա դիմաց:

Միևնույն ժամանակ Պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագրի 8-րդ կետով որպես աշխատանքների կատարման փուլեր նախատեսվել են Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը «МИЭТ» ազգային գիտահետազոտական համալսարանում:

Միևնույն ժամանակ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից իրականացված համապատասխան հարցման արդյունքում պարզվել է, որ «МИЭТ» ազգային գիտահետազոտական համալսարանում չի իրականացվել, չի մշակվել և չի ներդվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

«ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն ներկայացրած դիրքորոշմամբ պնդել է, որ Պայմանագրի մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և «МИЭТ» ազգային գիտահետազոտական համալսարանը իրականում Պայմանագրի կողմ չի հանդիսացել և Պայմանագրով նախատեսված աշխատանքների պատվիրատու և ստացող է հանդիսացել բացառապես «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն, ինչը հաստատվում է «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև 14.12.2017թ. կնքված Պայմանագրի կատարման հանձնման-ընդունման ակտով, ինչպես նաև 14.12.2017թ. թիվ 10 հաշիվ-ապրանքագրով: Ուստի Պայմանագիրը որպես այդպիսին իրականում կատարվել է, սակայն աշխատանքները կատարվել են Պայմանագրով պատվիրատու հանդիսացող «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի նկատմամբ:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Պայմանագրի հիման վրա 14.12.2017թ.

դուրս գրված թիվ 10 հարկային հաշիվը, ընկերության վաճառքների գիրքը ՌԴ հարկային մարմին մուտք արված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր:

Ուսումնասիրելով «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև 04.04.2017թ. կնքված Պայմանագիրը, վերջինիս թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիրը, Պայմանագրի կատարման՝ «ՏՐԱՆԶԻՏ» և «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊ ընկերությունների միջև 14.12.2017թ. կնքված հանձնման-ընդունման ակտը, Պայմանագրի հիման վրա 14.12.2017թ. դուրս գրված թիվ 10 հարկային հաշիվը, ինչպես նաև հիմք ընդունելով վերջինիս՝ ՌԴ հարկային մարմին մուտք արված և հաշվառված լինելու հանգամանքը հիմնավորող փաստաթղթերը, արձանագրում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրում որպես ստացող նշվել էր «ՄԻԷՏ» ազգային գիտահետազոտական համալսարանը և վերջինիս հանդեպ Պայմանագրով նախատեսված որևէ աշխատանք չի իրականացվել, այնուամենայնիվ Պայմանագրով նախատեսված աշխատանքները փաստացի իրականացվել են «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ի կողմից և սահմանված կարգով ընդունվել «ՄՈՍՈԲԼՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի՝ որպես Պայմանագրով նախատեսված պատվիրատուի կողմից:

Նման պայմաններում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ հնարավոր չէ արձանագրել «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը, քանի որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անհրաժեշտ է գտնում գործի քննության ընթացքում ի հայտ եկած փաստական հանգամանքները, մասնակցի կողմից ներկայացված փաստերը և դրանք հիմնավորող փաստաթղթերը մեկնաբանել հօգուտ մասնակցի:

Ինչ վերաբերում է «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ին, ապա գտնում եմ, որ վերջինս թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Կարգի 32-րդ կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ գնման ընթացակարգին համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ իրավերով

սահմանված որակավորման պահանջներին: Տվյալ դեպքում «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» և «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊ ընկերությունների միջև 14.05.2018թ. կնքված N ԱԹ-140518 համատեղ գործունեության պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշն ապահովելու պարտականությունը ստանձնել է «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.06.2018թ. թիվ 03/26-3/11891-18 գրությամբ՝

- «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 7706669420) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել.
- «ԱՅ ԹԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00179369) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**